ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ի N 1145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2024 թվականի N _ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ի N **1145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի «Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» N1145-Ն որոշման՝

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմը և ընտանիքների անդամները (ՀՀ քաղաքացի չհանդիսացող) փոխադարձության սկզբունքի հիման վրա ազատվում են Հայաստանի Հանրապետությունում վարորդական վկայական ստանալու համար նախատեսված պետական տուրքի վճարից։»:

2) 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն որոշման 1-ին կետում նշված ներկայացուցչության անձնակազմի և ընտանիքների անդամների (ՀՀ քաղաքացի չհանդիսացող) մասին տեղեկատվությունը

մեկամսյա ժամկետում համապատասխան ցուցակով ներկայացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ն. Փաշինյան

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
2024թ. ----------Երևան